


«ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻՉ»  
Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերության  
մասնակիցների ընդհանուր ժողովում  
« 11 » հոկտեմբերի 2016թ.

Մասնակից՝ Մ. Փարմա  
(ստորագրություն)



## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԱԼՖԱՍԵՔՅՈՒՐԻԹԻՉ ՍՊԸ  
ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ  
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ  
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

## **1. Ընդհանուր դրույթներ**

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հաճախորդներին փոխառությունների տրամադրման սկզբունքներն ու պայմանները՝ արժեթղթերով գործարքների իրականացման համար, պայմանով, որ փոխատուն հանդիսանում է նման գործարքի կողմ:

1.2. Սույն կանոնակարգի իմաստով փոխառություններ են համարվում Հաճախորդներին տրամադրվող փոխառությունները, մասնավորապես, եթե կնքված գործարքի գծով վերջնահաշվարկի իրականացման ժամանակ Հաճախորդի դրամական միջոցները չեն բավարարում գործարքներից բխող պարտավորությունների ամբողջական կատարման համար, ապա Հաճախորդի մոտ առաջանում է դրամական միջոցների գծով պարտավորություն Ընկերության նկատմամբ այն արժույթով, որով արտահայտված են Հաճախորդի կողմից գնված արժեթղթերը:

1.3. Սույն կանոնակարգի իմաստով Հաճախորդներ են համարվում այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր օգտվում են Ընկերության ներդրումային ծառայություններից, կամ դիմել են Ընկերությանը՝ ներդրումային ծառայություններից օգտվելու նպատակով:

## **2. Փոխառությունների տրամադրման չափերը, սկզբունքներն ու պայմանները**

2.1. Ընկերությունը Հաճախորդի հետ կնքում է փոխառության պայմանագիր, եթե Ընկերության կարծիքով ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի գիտելիքներն ու փորձը, ինչպես նաև համբավն ու հեղինակությունը բավարար են, և նման ծառայությունը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:

2.2. Դրամական միջոցների գծով պարտավորությունների առաջացման դեպքում Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է Փոխառություն Հաճախորդի կողմից համապատասխան ապահովվածության տրամադրման պայմանով, որը սահմանվում է Ընկերության և Հաճախորդի միջև կնքված փոխառության պայմանագրով:

2.3. Փոխառու միջոցների օգտագործման վճարի չափը սահմանվում է Ընկերության և Հաճախորդի միջև կնքված փոխառության պայմանագրով:

2.4. Հաճախորդներին (ներառյալ Ընկերության աշխատակից հանդիսացող Հաճախորդներին) փոխառու միջոցների տրամադրումը իրականացվում է հաշվի առնելով ՀՀ ԿԲ համապատասխան նորմատիվ իրավական ակտերով ամրագրված պահանջները:

2.5. Հաճախորդին (ներառյալ Ընկերության աշխատակից հանդիսացող Հաճախորդներին առանձին և/կամ բոլորին միասին) տրամադրման ենթակա փոխառության առավելագույն սահմանաչափը սահմանվում է գործադիր տնօրենի որոշմամբ:

2.6. Ընկերության աշխատակից հանդիսացող Հաճախորդներին փոխառության տրամադրման ժամանակ հաշվի են առնվում «Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ կողմից աշխատակիցներին և քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատող անձանց տրամադրվող փոխառությունների կանոնակարգով սահմանված դրույթները: Ընկերության աշխատակից հանդիսացող Հաճախորդներին Ընկերության վերոնշյալ կանոնակարգով և սույն կանոնակարգով սահմանված կարգով միաժամանակ տրամադրված փոխառությունների առավելագույն չափերը և ժամկետները չեն կարող գերազանցել վերոնշյալ կանոնակարգի Հավելված 1-ով և 2 -ով սահմանված չափերն ու ժամկետները:

## **3. Փոխառությունների տրամադրման և սպասարկման կարգը**

3.1. Արժեթղթերով գործարքների իրականացման համար փոխառություն ստանալու նպատակով Հաճախորդը Արժեթղթերի բաժին է ներկայացնում՝

- փոխառության տրամադրման դիմում-հայտ/Հավելված 1/,
- Ընկերության Բրոքերային/դիլերային/ գործարքները կարգավորող կանոնների Կանոն 3-ով սահմանված տեղեկատվությունը/Ձև 1/,

- Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի /այսուհետև՝ FATCA (Foreign Account Tax Compliance Act)/ պահանջների ներդրման ընթացակարգի Հավելված 1-ը կամ Հավելված 2-ը կամ Հավելված 3-ը,
- Անհրաժեշտության դեպքում կամ Ընկերության պահանջով ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկատվությունը:

3.2. Ընկերության Արժեթղթերի բաժինը, հիմնվելով սույն կանոնակարգի 3.1. կետով սահմանված տեղեկատվության վրա, զեկուցագիր/Հավելված 2/ է ներկայացնում Հաշվապահական հաշվառման բաժնին, որն էլ ապահովում է փոխառության պարտավորությունների սպասարկումը:

3.3. Հաճախորդի հետ պայմանագրային հարաբերությունների դադարեցման դեպքում Հաշվապահական հաշվառման բաժինն իրականացնում է Հաճախորդի փոխառության պարտավորության մարումը փոխառության պայմանագրով սահմանված համապատասխան ապահովության հաշվին:

#### 4. Եզրափակիչ դրույթներ

- 4.1. Ընկերությունը իրավունք ունի սույն Կանոնակարգի մեջ փոփոխություններ մտցնել առանց Հաճախորդի նախնական համաձայնության:
- 4.2. Սույն Կանոնակարգի փոփոխության մասին Ընկերությունը պետք է տեղյակ պահի Հաճախորդին փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 15 օր առաջ:
- 4.3. Սույն կանոնակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության միակ մասնակցի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ) և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո:
- 4.4. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում «ԱԼՖԱՄԵԲՅՈՒՐԻԹԻՉ» ՍՊԸ միակ մասնակցի կողմից հաստատման պահից:

Հավելված 1

Արժաստեղծությունից ՄՊԸ

գործադիր տնօրեն Գոհար Գրիգորյանին

\_\_\_\_\_ից  
/Նախագահի անունը, ազգանունը հայրանունը կամ անվանումը/

**Դիմում Հայտ**

Համաձայն \_\_\_\_\_ թ. թիվ \_\_\_\_\_ պայմանագրի  
խնդրում եմ տրամադրել ինձ փոխառություն \_\_\_\_\_ ժամկետով՝ գործարքից  
բխող պարտավորությունների ամբողջական կատարման նպատակով:

« » \_\_\_\_\_ 20 թ.

Դիմող՝ \_\_\_\_\_  
/Նախագահի անունը, ազգանունը հայրանունը կամ անվանումը/

**Ալֆաստեքյուրիթիզ ՍՊԸ**

**Հաշվապահական հաշվառման բաժին**

---

**Չեկուցագիր**

Հիմք ընդունելով Հանախորդի կողմից \_\_\_\_\_ թ. -ին ներկայացված Ալֆաստեքյուրիթիզ ՍՊԸ կողմից արժեթղթերով գործարքների իրականացման համար հանախորդներին տրամադրվող փոխառությունների կանոնակարգի 3.1. կետով սահմանված տեղեկատվությունները, ինչպես նաև \_\_\_\_\_ թ. թիվ \_\_\_\_\_ պայմանագիրը ինդերում ենք ձևակերպել փոխառություն \_\_\_\_\_ ժամկետով՝ գործարքից բխող պարտավորությունների ամբողջական կատարման նպատակով:

«    » \_\_\_\_\_ 20 թ.

**Արժեթղթերի բաժնի պետ/աշխատակից՝**

---

/սևուկ, ազգանունը հայրանունը/